ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 853-Ա

<<07>> հոկտեմբերի 2024 թվականի քաղաք Մարալիկ

ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-003-0029-0108 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,00886 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻ ԳԵՅԻՄ ՖԵԼԻՔՍԻ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի գեոդեզիայի և հողօգտագործման վերահսկողության վարչության մասնագետների կողմից կազմված 2023 թվականի նոյեմբերի 6-ի N ՏԾ/ԳՀ/13-18 ակտը և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 14-ի N ՏԾ/ԳՀ/13-18 որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 26-ի N 125-Ա որոշումը և հաշվի առնելով քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանի 2024 թվականի մայիսի 20-ի դիմումը՝ կառուցապատման իրավունքով իր կողմից օգտագործվող 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,00886 հեկտար հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով իրեն վաճառելու մասին.

Որոշում է՝

1. Քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանի կողմից կառուցապատման իրավունքով օգտագործվող համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0029-0108 կադաստրային ծածկագրով 0,00886 հեկտար մակերեսով հողամասը /Կառուցապատման իրավունքի Վկայական՝ N 06102023-08-0039, համայնքի սեփականության իրավունքի Վկայական՝ 20102022-08-0002/ գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով, տվյալ հողամասի կադաստրային արժեքով, 70172 /յոթանասուն հազար մեկ հարյուր յոթանասուներկու/ Հայաստանի Հանրապետության դրամ գումարով, վաճառել

քաղաքացի Գեյիմ Ֆելիքսի Առուշանյանին (հետագայում Գնորդ, բնակության հասցեն՝ մարզ Շիրակ, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Ձերժինսի փողոց, շենք 10, բնակարան 4, անձնագիր՝ AV0491489 տրված՝ «26» հոկտեմբերի 2022թվական, 022-ի կողմից) և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Գնորդի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր:

2. Նշել, որ՝

1) օտարվող հողամասը չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

2) հողամասի օտարումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

3) օտարվող հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի կազմում:

3. Սույն որոշումից բխող իրավունքները օրենքով սահմանված կարգով ենթակա են պետական գրանցման՝ Գնորդի միջոցներով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ**

/Պարտականությունները կատարող/

<<07>> հոկտեմբերի 2024 թ.
քաղաք Մարալիկ